## *1.2 Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:* 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ 1218 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), փաստացի գներով, թողարկվել է 116511.5մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 117140.4 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 16829.7 մլն. դրամի, այլ երկրներում՝ 19644.5 մլն. դրամի արտադրանք:

2000թ. հունվար-մայիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 104.2 %, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը առանց էներգետիկայի՝ 112.0 %:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 1999թ. դեկտեմբերի նկատմամբ




Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

*(տոկոսներով)*

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| 2000 թ. | | | |
| հունվար | 80.7 | 94.3 | 80.7 |
| փետրվար | 111.1 | 108.0 | 89.7 |
| մարտ | 105.5 | 99.4 | 94.6 |
| ապրիլ | 89.0 | 95.4 | 84.2 |
| մայիս | 111.3 | 119.8 | 93.7 |
| հունիս | 103.9 | 102.0 | 97.4 |
| հուլիս | 104.8 | 104.3 | 102.1 |
| օգոստոս | 103.5 | 105.9 | 105.7 |
| սեպտեմբեր | 96.7 | 107.0 | 102.2 |
| հոկտեմբեր | 99.3 | 107.1 | 101.5 |
| նոյեմբեր | 96.5 | 108.5 | 97.9 |

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| դեկտեմբեր | 124.5 | 123.1 | 121.9 |
| 2001 թ. | | | |
| հունվար | 78.5 | 116.5 | 78.5 |
| փետրվար | 95.0 | 106.0 | 74.6 |
| մարտ | 105.9 | 103.4 | 79.0 |
| ապրիլ | 89.9 | 103.2 | 71.0 |
| մայիս | 98.9 | 90.7 | 70.2 |

## Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն, ըստ գործունեության հիմնական տեսակների[1]

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով [2], մլն դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով[2], մլն դրամ | 2001թ. հունվար-մայիսին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը (%) 2000թ. հունվար – մայիսի նկատմամբ (համադրելի գներով) |
|---|---|---|---|
| **Ամբողջ արդյունաբերությունը** | **116511.5** | **117140.4** | **104.2** |
| *այդ թվում.* | | | |
| Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում | 37078.9 | 37078.9 | 90.3 |
| Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում | 8252.7 | 6972.0 | 139.5 |
| Վերամշակող արդյունաբերություն | 71179.9 | 73089.5 | 109.5 |
| *որից.* | | | |
| սննդամթերքների և ըմպելիքների արտադրություն | 41686.2 | 42988.2 | 116.9 |
| ծխախոտի ապրանքների արտադրություն | 2654.4 | 2517.9 | 44.2 |
| տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն | 433.0 | 418.9 | 86.2 |
| հագուստի արտադրություն | 878.9 | 721.8 | 172.4 |
| կաշվի դաբաղում և մշակում, կոշիկի, ճամպրուկների, պայուսակների, թամբա-լծասարքային իրերի արտադրություն | 136.7 | 151.5 | 176.8 |
| փայտանյութի և փայտե իրերի արտադրություն | 402.2 | 362.1 | 119.4 |
| քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն | 4067.1 | 4608.2 | 141.5 |
| ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրություն | 136.2 | 151.0 | 67.5 |
| ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն | 1682.7 | 2086.0 | 80.6 |
| մետալուրգիական արդյունաբերություն | 8213.6 | 8602.4 | 147.6 |
| մետաղամշակման արդյունաբերություն | 569.6 | 556.2 | 81.8 |
| մեքենաների և սարքավորումների արտադրություն | 1580.7 | 1821.0 | 117.2 |
| թանկարժեք իրերի արտադրություն | 5907.5 | 4940.8 | 82.4 |

[1] *Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունն ըստ գործունեության հիմնական տեսակների առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):*

[2] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

## Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության սեկտորների 2001թ. հունվար - մայիսին




- Վերամշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում
- Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում

## Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում




Էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխանցումը և բաշխումը
- Էլեկտրաէներգիայի արտադրությունը`
1. հիդրոէլեկտրակայաններում
2. ջերմաէլեկտրակայաններում
3. ատոմային էլեկտրակայանում
- Էլեկտրացանցերի կողմից էլեկտրաէներգիայի փոխանցումը և բաշխումը

## Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում




## Վերամշակող արդյունաբերություն



2001թ. հունվար-մայիսին արտադրված (հաշվառվող) 100 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 64 գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2000թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի՝ 48-ից 33-ի և սպառողական ապրանքների՝ 52-ից 31-ի գծով:

**Սպառողական ապրանքների արտադրության ծավալները [2]**

*(համադրելի բացթողնման գներով, մլն դրամ)*

| | Փաստացի թողարկումը հունվար-մայիսին | | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| | 2001թ. | 2000թ. | |
| Սպառողական ապրանքներ, ընդամենը | 51379.0 | 45909.9 | 111.9 |
| *այդ թվում.* | | | |
| պարենային ապրանքներ | 31600.9 | 28918.4 | 109.3 |
| ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը) | 9980.6 | 5472.1 | 182.1 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 9797.5 | 11519.4 | 85.1 |
| *այդ թվում.* | | | |
| թեթև արդյունաբերության | 3140.5 | 1924.3 | 163.2 |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 6657.0 | 9595.1 | 69.4 |

Ընդհանուր առմամբ, 2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 2477.8մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2000թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 92.4 %: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 3.7%, իսկ ՋԷԿ-երում և ՀԷԿ-երում նվազել է համապատասխանաբար, 20.2 և 10.1 %:

2001թ. հունվար-մայիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1269.9 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 51.2%, ՋԷԿ-երը, համապատասխանաբար 794.5մլն կՎտ ժամ և 32.1%, ՀԷԿ-երը՝ 413.4մլն կՎտ ժամ և 16.7%:

2001թ. հունվար-մայիսին հանրապետությունում թողարկվել է 339.5 հազ.Հկալ ջերմային էներգիա, որը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 96.7%:

***Մնդի*** **արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը[3]**

| | 2001 թ. հունվար-մայիս | 2000 թ. հունվար-մայիս | 2001թ. հունվար-մայիսը (%) 2000 թ. հունվար-մայիսի նկատմամբ |
|---|---|---|---|
| Ձկան որս, տոննա | 300.1 | 125.6 | 2.4անգամ |
| Միս[4], տոննա | 11116 | 11788◊ | 94.3 |
| Երշիկեղեն, տոննա | 413.1 | 231.6 | 178.4 |
| Պանիր[4], տոննա | 1760 | 1789 | 98.4 |
| Պաղպաղակ, տոննա | 262.5 | 348.2 | 75.4 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)[4], հազ. տոննա | 68.7 | 68.6◊ | 100.1 |
| Պահածո, հազ. պայմ. բանկա | 1211.4 | 1331.7 | 91.0 |
| Ալյուր, հազ. տոննա | 43.0 | 62.1 | 69.3 |
| Ձավարեղեն, տոննա | 11.8 | 24.8 | 47.6 |
| Հաց և հացամթերք, հազ. տոննա | 124.4 | 126.3◊ | 98.5 |

[3] *Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):*

[4] *Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):*

| | 2001 թ. հունվար-մայիս | 2000 թ. հունվար-մայիս | 2001թ. հունվար-մայիսը (%) 2000 թ. հունվար-մայիսի նկատմամբ |
|---|---|---|---|
| Հրուշակեղեն, տոննա | 1544 | 614 | 2.5անգամ |
| Մակարոնեղեն, տոննա | 313.2 | 298.6 | 104.9 |
| Օղի և օղու լիկյորի արտադրանք, հազ. լիտր | 3680 | 3704 | 99.4 |
| Կոնյակ, հազ. լիտր | 2073.2 | 792.9 | 2.6անգամ |
| Խաղողի գինի, հազ. լիտր | 988.1 | 986.3 | 100.2 |
| Շամպայն գինի, հազ. շիշ | 232.3 | 228.7 | 101.6 |
| Գարեջուր, հազ. լիտր | 2918.8 | 2263.4 | 129.0 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ հազ. լիտր | 8422 | 4825 | 174.5 |
| Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ | 12644 | 9212 | 137.3 |
| Աղ, տոննա | 9493 | 10098 | 94.0 |
| Սիգարետներ, մլն.հատ | 543.7 | 1146.4 | 47.4 |

***Թեթև*** **արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից**
**հիմնական արտադրատեսակների թողարկումը**

| | 2001 թ. հունվար-մայիս | 2000 թ. հունվար-մայիս | 2001 թ. հունվար-մայիսը (%) 2000 թ. հունվար- մայիսի նկատմամբ |
|---|---|---|---|
| Բամբակյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 14.1 | 67.9 | 20.8 |
| Բրդյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 8.5 | 2.0 | 4.3անգամ |
| Մետաքսյա գործվածքներ, հազ. $մ^2$ | - | 4.0 | - |
| Գորգեր և գորգեղեն, հազ. $մ^2$ | 7.3 | 6.9 | 105.8 |
| Գուլպեղեն, հազ. զույգ | 190.2 | 391.9 | 48.5 |
| Տրիկոտաժեղեն, հազ. հատ | 888.0 | 1048.3 | 84.7 |
| Կարի արտադրանք, մլն. դրամ | 2837.3 | 1752.7 | 161.9 |

2001թ. հունվար-մայիսին ***քիմիական*** արդյունաբերության ճյուղի հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 4 անգամ, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 64.7%-ով, սինթետիկ կաուչուկինը՝ 62.6%-ով, կաուստիկ սոդայինը՝ 7.2%-ով, իսկ պլաստմասսայից իրերի և լվացող ու մաքրող միջոցների արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 8.6 և 71.7%:

***Շինանյութերի*** **արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից**
**հիմնական արտադրատեսակների թողարկումը**

| | 2001 թ. հունվար-մայիս | 2000 թ. հունվար-մայիս | 2001 թ. հունվար- մայիսը (%) 2000թ. հունվար- մայիսի նկատմամբ |
|---|---|---|---|
| Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, $մ^3$ | 5929 | 6287 | 94.3 |
| Ապրանքային բետոն, $մ^3$ | 8155 | 3191 | 2.6անգամ |
| Երեսպատման սալեր բնական քարից, $մ^2$ | 24229 | 12349 | 196.2 |
| Ոչ հանքային շինանյութեր, $մ^3$ | 29834 | 24240 | 123.1 |
| Կիր, տոննա | 2377 | 1542 | 154.2 |
| Գաջ, տոննա | 2278 | 4240 | 53.7 |
| Ցեմենտ, հազ. տոննա | 45.0 | 61.6 | 73.1 |
| Կանոնավոր կտրվածքի տուֆ, $մ^3$ | 16071 | 12546 | 128.1 |
| Ծակոտկեն լցանյութեր, $մ^3$ | 10606 | 19811 | 53.5 |
| Կլինկեր, հազ. տոննա | 19.2 | 101.3 | 19.0 |
| Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, $մ^2$ | 2697 | 3188 | 84.6 |

*Մետալուրգիական* արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե փայլաթիթեղի արտադրությունը ավելացել է 266 անգամ, պղինձ` պղնձե խտանյութում` 80.8%-ով, ալյումինե գլանվածքինը` 59.3%-ով, կոնվերտորային (սև) պղնձինը` 44.4%-ով:

**_Մեքենաշինության_ ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը**

| | 2001 թ. հունվար-մայիս | 2000 թ. հունվար-մայիս | 2001 թ. հունվար- մայիսը (%) 2000 թ. հունվար- մայիսի նկատմամբ |
|---|---|---|---|
| Մետաղահատ հաստոցներ, հատ | 39 | 64 | 60.9 |
| Ռելեներ, հազ. հատ | 144.3 | 48.3 | 3անգամ |
| Ուժային ճկուն կաբելներ, կմ | 6.9 | 5.9 | 116.9 |
| Ուժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ | 509 | 454 | 112.1 |
| Ռետինապատված հաղորդալարեր, կմ | 699 | 163 | 4.3անգամ |
| Շարժական էլեկտրակայաններ, հատ | 11 | 8 | 137.5 |
| Տեղակայման հաղորդալարեր, կմ | 2575 | 1266 | 2անգամ |
| Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ | 1358 | - | - |
| Ճնշակներ, հատ | 18 | - | - |
| Կենտրոնախույս պոմպեր, հատ | 1771 | 1050 | 168.7 |
| Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ | 609 | 785 | 77.6 |
| 63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ | 97 | - | - |